ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Արդարադատության նախարարություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

ԳԼՈՒԽ 1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 4

1. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների ինստիտուտի ներդրումը 4

2. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի իրավասությունները. 6

3. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի աշխատանքների կազմակերպումը հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի շրջանակներում 9

4. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ 13

ԳԼՈՒԽ 2. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 15

I. ՀՀ միջազգային հակակոռուպցիոն պարտավորություններ 15

1.1 Միավորված ազգերի կազմակերպության «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա (UNCAC) 15

1.2. Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խումբ (ԳՐԵԿՈ) 16

1.3. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն 16

II. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների գործառույթները 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթուղթը պատրաստվել է ՀՀ արդարադատության կողմից ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող Հայաստանի բարեվարքության ծրագրի աջակցությամբ, որի նպատակն է ապահովել հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների կողմից համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավասության շրջանակներում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքների պատշաճ համակարգումը:

Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուները հակակոռուպցիոն ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման համար պատասխանատու՝ կատարող և համակատարող մարմինների՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 7.1-րդ գլխող նախատեսված անձինք են, որոնք ներգերատեսչական մակարդակում ապահովում են համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակներում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների և այդ մարմինների կողմից հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքների համակարգումը, ներառյալ՝ դրա շրջանակում հաշվետվությունների և ինքնագնահատման զեկույցների կազմումը:

Հակակոռուպցիոն ռազմավարության և այլ ծրագրերի իրականացման շրջանակներում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներին մեթոդական աջակցությունը, խորհրդատվությունը, ինչպես նաև ոլորտային միջազգային պարտավորությունների շրջանակներում վերջիններիս աշխատանքների իրականացման համակարգումն ապահովում է ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչությունը:

Հաշվի առնելով ինստիտուտի նոր լինելը՝ ՀՀ կառավարությունը 2023թ. հոկտեմբեր 26-ի 1871-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հակակառուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թթ. գործողությունների ծրագրով» (այսուհետ՝ Ռազմավարություն) նախատեսվեց հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների

կարողությունների զարգացման անհրաժեշտությունը։ Սույն ուղեցույցը մշակվել է ի կատարումն Ռազմավարության 5.5 գործողության և ուղղված է հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների կարողությունների զարգացմանը՝ պատշաճ իրականացնելու օրենսդրությամբ նախատեսված պարտականությունները։

ԳԼՈՒԽ 1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների ինստիտուտի ներդրումը

Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների ինստիտուտը ներդրվել է Հակակոռուպցիոն 2019-2022թթ. ռազմավարության շրջանակներում 2022թ. դեկտեմբերի 7-ի ««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-540-Ն օրենքով (այսուհետ՝ Օրենք), որը, ի թիվս այլ նպատակների, պայմանավորված էր նաև Հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված գործողությունների նկատմամբ մոնիթորինգ իրականացնելու անհրաժեշտությամբ[1]: Մինչև հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների ինստիտուտի ներդրումը, հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման գործընթացին, ինչպես նաև ոլորտային միջազգային պարտավորությունների կատարմանը էապես խոչընդոտում էր պետական մարմիններում, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի նկատմամբ հսկողություն իրականացնող պատասխանատու ստորաբաժանում կամ պաշտոնատար անձ նշանակված չլինելու հանգամանքը, ներգերատեսչական մակարդակում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման աշխատանքների համակարգման բացակայությունը:

Մինչև Օրենքի ընդունումը տարբեր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացմանն առնչվող գործառույթները որևէ իրավական ակտով ամրագրված չէին, և նման պայմաններում ներգերատեսչական մակարդակում միասնական համակարգվածությունը չէր ապահովվում: Հաճախ հակակոռուպցիոն ծրագրերի տարբեր միջոցառումներ իրականացնում էին տարբեր ստորաբաժանումներ՝ երբեմն դրսևորելով հակասող մոտեցումներ: Պետական մարմիններում ներգերատեսչական մակարդակում կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում աշխատանքների պատշաճ համակարգվածության բացակայությունը խնդիրներ էր առաջացրել նաև ոլորտային միջազգային պարտավորությունների շրջանակներում անհրաժեշտ տեղեկությունները հավաքագրելու, հաշվետվություններ ներկայացնելու գործընթացի ընթացքում: Հատկանշական է նաև, որ ՏՀԶԿ-ի կողմից 2021 թվականի

[1] Ի դեպ, հակակոռուպցիոն ռազմավարությունների համակարգման և մոնիթորինգի գործառույթների իրականացման ապահովումը հանդիսանում է ՏՀԶԿ կողմից գնահատվող կարևոր ուղղություններից մեկը:

գնահատման շրջանակներում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման առնչությամբ Հայաստանի Հանրապետության պարտավորությունները գնահատվել են չկատարված նաև այն հիմնավորմամբ, որ միջգերատեսչական մակարդակում հակակոռուպցիոն ծրագրերի համակարգում չէր իրականացվում: Մինչդեռ, ՏՀԶԿ կողմից 2023թ. իրականացված 5-րդ գնահատման շրջափուլի զեկույցում ՏՀԶԿ-ն դրական է գնահատել այս օրենսդրական փոփոխությունը՝ արձանագրելով հակակոռուպցիոն քաղաքականության պատշաճ մոնիթորինգի[2] իրականացման օրենսդրական սահմանումները:

Օրենքով սահմանվեցին հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների և հակակոռուպցիոն քաղաքականության իրավասու մարմնի լիազորությունները ռազմավարական փաստաթղթերի և միջազգային պարտավորությունների շրջանակներում տարվող աշխատանքների իրականացման և համակարգման ոլորտում:

Ռազմավարության 2-րդ հավելվածով՝ հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների կարողությունների զարգացման նպատակով սահմանվեցին մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են վերջիններիս համար գործունեության ուղեցույցների մշակմանը, վերապատրաստումների իրականացմանը և այլն:

Սույն ուղեցույցը նպատակ ունի ուղղորդել հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներին որպեսզի նրանց ամբողջությամբ տիրապետեն իրենց գործառույթներին, ինչպես նաև նրանց ցուցաբերել մեթոդական աջակցություն՝ արդյունավետ կերպով իրականացնելու իրենց գործառույթները: Մասնավորապես՝

1) Ինչպես իրականացնել Հակակոռուպցիոն ռազմավարության բուն կատարողականի թիրախում նախանշված գործողությունները՝ պահպանելով ժամկետը և հետևելով արդյունքային քանակական և որակական ցուցանիշներին.

2) Ինչպես կազմել Հակակոռուպցիոն ռազմավարության հաշվետվությունը՝ հիմք ընդունելով կատարողականի թիրախը.

[2] Սույն ուղեցույցում **“Մոնիթորինգ” հասկացությունը սահմանվում է** որպես նախանշված կամ կանխորոշված ցուցիչների գծով տվյալների սիստեմատիկ հավաքագրման շարունակական գործունեություն, որի նպատակը, ընթացիկ զարգացման ծրագրերի պատասխանատուներին և հիմնական շահառուներին տեղեկու-թյուններ տրամադրելն է, ինչպես ծրագրով սահմանված խնդիրների լուծման առաջ-ընթացի և իրականացման չափի, այնպես էլ ծրագրում տեղաբաշխված ռեսուրսների օգտագործման վերա-բերյալ:

3) Տեղեկատվություն Հակակոռուպցիոն միջազգային մոնիթորինգային մարմինների և իրականացվող գնահատումների մասին.

4) Ինչպես լրացնել Հակակոռուպցիոն միջազգային մոնիթորինգային մարմինների հարցաշարերը, ներկայացնել կարծիք զեկույցների վերաբերյալ.

5) Ինչպես ներկայացնել հաշվետվություններ հակակոռուպցիոն միջազգային մոնիթորինգային մարմիններին.

6) Տեղեկատվություն Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի մասին և ինչպես աջակցել վերջինիս գործունեությանը, եթե համապատասխան մարմնի ղեկավարը ներառված է խորհրդում.

7) Ինչպես ապահովել համագործակցությունը հասարակական կազմակերպությունների հետ հակակոռուպցիոն ոլորտում:

2. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի իրավասությունները.

Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի ինստիտուտը ենթադրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում պետք է սահմանվեն հակակոռուպցիոն ռազմավարություններով, ծրագրերով և ոլորտային միջազգային պարտավորություններով իրականացված կամ իրականացվելիք աշխատանքների համակարգման և ներկայացման գործառույթներ:

ՀՀ Արդարադատության նախարարության և պետական մարմինների միջև արդյունավետ և օպերատիվ համագործակցությունն ապահովելու համար պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում նշանակվել են հակակոռուպցիոն ծրագրի պատասխանատուներ և նրանց փոխարինող առնվազն 1 անձ, ով պատասխանատուի բացակայության դեպքում կփոխարինի վերջինիս:

Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուն (ինչպես նաև փոխարինողը) ապահովում է համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավասության շրջանակներում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքների համակարգումը: Նա նաև պատասխանատու է հակակոռուպցիոն ռազմավարությամբ տվյալ մարմնի համար նախատեսված գործողությունների իրականացման համար և կրում է պարտականություն մասնակցել բոլոր քննարկումներին և ներկայացնել հաշվետվություններ ՀՀ Արդարադատության Նախարարություն:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 46.2 հոդվածի համաձայն՝ *հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուն՝*

1) պարտավոր է իր իրավասության շրջանակներում համագործակցել իրավասու մարմինների հետ, ապահովել ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների իրականացումը, հաշվետվությունների տրամադրումը, ինքնագնահատման զեկույցների կազմումը, հարցաշարերի լրացումը, մասնակցությունը հակակոռուպցիոն ոլորտին առնչվող քննարկումներին,

2) պարտավոր է տրամադրել համապատասխան մարմնի գործառույթներին առնչվող ռազմավարական փաստաթղթերով նախատեսված՝ հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվություն, պարզաբանումներ, միջոցներ ձեռնարկել համապատասխան մարմնի կողմից ոլորտային միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու ուղղությամբ.

3) իրավունք ունի համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի շրջանակներում տվյալ մարմնի ստորաբաժանումներից պահանջելու և ստանալու տեղեկատվություն,

4) իրավունք ունի հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիտորինգի համար պատասխանատու մարմնից պահանջելու և ստանալու մեթոդական աջակցություն, խորհրդատվություն ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների վերաբերյալ:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 46.3 հոդվածի համաձայն՝ *Հակակոռուպցիոն ռազմավարության և այլ ծրագրերի իրականացման շրջանակներում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներին մեթոդական աջակցությունը, խորհրդատվությունը, ինչպես նաև ոլորտային միջազգային պարտավորությունների շրջանակներում վերջիններիս աշխատանքների իրականացման համակարգումն ապահովում է հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիտորինգի համար պատասխանատու պետական մարմինը:*

Վերը շարադրված լիազորությունների իրականացման շրջանակում արդարադատության նախարարությունը (որը հանդիսանում է հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիտորինգի համար պատասխանատու պետական մարմինը) իրավունք ունի հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուից պահանջելու և ստանալու տեղեկություններ և հիմնավորող փաստաթղթեր հակակոռուպցիոն ռազմավարության և այլ ծրագրերի, ոլորտային միջազգային պարտավորությունների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ, ներկայացնելու ոլորտային միջազգային պարտավորությունների համակարգումից բխող առաջարկություններ:

Այսպիսով, հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների գործունեության մեթոդական համակարգումն իրականացնում է Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչությունը:

Այլ կերպ՝ հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների գործառույթներն են՝

●Համապատասխան պետական մարմնի պատասխանատվության ոլորտում գտնվող Ռազմավարությամբ սահմանված գործողության մոնիթորինգի ու գնահատման համար անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրումը՝ անհրաժեշտության դեպքում

համագործակցելով նույն միջոցառման համար պատասխանատու այլ պետական կառավարման մարմինների, տվյալ միջոցառման շրջանակներում մասնակցային մոնիթորինգ իրականացնող քաղաքացիական հասարակության սուբյեկտների հետ:

●Հավաքագրված տեղեկությունների հիման վրա Ռազմավարության կիսամյակային և տարեկան հաշվետվությունների կազմումը՝ համաձայն սույն ուղեցույցով նկարագրված ընթացակարգի:

●Մոնիթորինգի ու գնահատման ընթացիկ աշխատանքների և հաշվետվությունների կազմման ընթացքում Ռազմավարության գործողությունների ակնկալվող արդյունքների և մոնիթորինգային ցուցիչների համակարգի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիթորինգի վարչությանը:

●Համապատասխան միջոցառման մոնիթորինգի նպատակով հավաքագրված տեղեկությունները, մոնիթորինգի և գնահատման հաշվետվությունները և դրանց հիման վրա մշակված եզրակացություններն ու առաջարկությունները քաղաքացիական հասարակության հետ քննարկումը:

●Ռազմավարության իրականացման մոնիթորինգի համար պատասխանատու ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիթորինգի վարչության հետ համագործակցությունը:

●Համապատասխան ոլորտում կոռուպցիայի վերաբերյալ իրականացված հետազոտությունների, այդ թվում դրանց այլընտրանքային մոնիթորինգի ու գնահատման զեկույցներին ծանոթացումը և դրանց արդյունքներին տիրապետումը:

3. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի աշխատանքների կազմակերպումը հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի շրջանակներում

Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգն իրականացվում է կիսամյակային և տարեկան կտրվածքով:

Ռազմավարության կատարող մարմինները յուրաքանչյուր տարվա առաջին կիսամյակի ավարտից հետո՝ սահմանված ժամանակահատվածում պահանջվող ձևաչափով

արդարադատության նախարարություն են ներկայացնում հաշվետվություն Ռազմավարության գործողությունների ծրագրով իրենց կողմից կատարման ենթակա աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Ռազմավարության կատարող մարմինները յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ սահմանված ժամկետում պահանջվող ձևաչափով արդարադատության նախարարություն են ներկայացնում տարեկան հաշվետվություն Ռազմավարության գործողությունների ծրագրով իրենց կողմից կատարման ենթակա աշխատանքների վերաբերյալ:

Հակակոռուպցիոն ծրարգրերի պատասխանատուն կարևոր օղակ է հանդիսանում կատարող մարմինների և Արդարադատության նախարարության միջև հակակոռուպցիոն քաղաքականության մոնիթորինգի շրջանակներում փոխանցվող տեղեկատվության ամբողջականության և ճշգրտության ապահովման շրջանակներում:

Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուն մինչև հաշվետվությունների տրամադրման ժամանակահատվածը շարունակաբար հետևում է կատարող մարմնի գործողությունների իրականացման ընթացքին, իսկ հաշվետվություն ներկայացնելու ժամանակահատվածում ուղղորդում է համապատասխան ստորաբաժանումների հաշվետվությունների կազմման գործում կամ անձամբ է կազմում դրանք:

Վերոգրյալի նպատակով Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուն.

1) Հետևում և մշտադիտարկում է տվյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնում Կառավարության գործունեության ծրագրի, հակակոռուպցիոն ռազմավարության, ինչպես նաև ՀՀ միջազգային պարտավորությունների կատարման ընթացքը:

2) Իր հայեցողությամբ ամսական կամ եռամսյակին կտրվածքով հարցումներ է ուղարկում համապատասխան գերատեսչության մասնագիտական և աջակցող ստորաբաժանումներին՝ հակակոռուպցիոն ռազմավարությունների և միջազգային պարտավորությունների շրջանակներում իրականացման ենթակա միջոցառումների ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով:

3) Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուն ստացված տեղեկատվությունը հավաքագրում և մշակում է առաջիկա հաշվետվությունը նախապատրաստելու նպատակով կամ ուղղորդում է կատարող ստորաբաժանմանը հաշվետվության կազմման ժամանակ: Ստորաբաժանումներից ամսական կամ եռամսյակային պարբերականությամբ

տեղեկատվության հավաքագրումը հնարավորություն է ընձեռում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուին, որպեսզի նա բավարար ժամանակ ունենա այն քննարկել ինչպես կատարողների ստորաբաժանումների մասնագետների, այնպես էլ արդարադատության նախարարության հետ:

4) Եթե միջոցառման բովանդակության, ինչպես նաև տվյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից արդարադատության նախարարության կողմից պահանջվող տեղեկատվության բովանդակության վերաբերյալ առաջացել է պարզաբանման կարիք, ապա Հակակառուպցիոն ծրագրերի պատասխանատուն կարող է ինքուրույն հարցում կատարել արդարադատության նախարարություն պարզաբանում ստանալու խնդրանքով: Կախված ծավալից, հրատապությունից կամ այլ հանգամանքներից՝ արդարադատության նախարարությունը պարզաբանումը կարող է տրամադրել գրավոր կամ բանավոր:

5) Եթե տվյալ մարմնի մասնագիտական կամ աջակցող ստորաբաժանումը, որը պարտականություն ունի տեղեկատվություն տրամադրել հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուին, բավարար և որակյալ տեղեկատվություն չի տրամադրում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուին, ապա վերջինս այդ մասին հայտնում է տվյալ ստորաբաժանման ղեկավարին կամ տվյալ մարմնի գլխավոր քարտուղարին կամ տվյալ ստորաբաժանումը համակարգող մարմնի ղեկավարի տեղակալին՝ ներկայացնելով պահանջվող տեղեկատվության շրջանակը և դրա ներկայացման ժամկետները:

Հակակոռուպցիոն ռազմավարության իրագործման, միջազգային հակակոռուպցիոն պարտավորությունների ապահովման, վերջիններիս շրջանակներում հաշվետվությունների կազմման, ներկայացվող հարցաշարերի լրացման և այլ գործառույթների իրականացման նպատակով հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուն յուրաքանչյուր տարի, ոչ ուշ քան մինչև տվյալ տարվա հունվարի 31-ը, մշակում է իր տարեկան աշխատանքային պլանը (այսուհետ՝ Պլան): Պլանը պետք է պարունակի հաշվետու տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների վերաբերյալ իրականացվելիք աշխատանքների նկարագրությունը (հաշվետվություններ, օրենքի կամ այլ իրավական ակտերի նախագծերի մշակում հակակոռուպցիոն իրազեկման արշավներ և այլն) և ժամանակացույցը: Պլանում մանրամասն ներկայացված է յուրաքանչյուր միջոցառման համար տվյալ գերատեսչության կողմից կատարման ենթակա աշխատանքի նկարագրությունը

(իրավական ակտի նախագծի մշակում, տեղեկատվության տրամադրում Արդարադատության նախարարությանը, զեկույցի պատրաստում որևէ հանձնարարականի վերաբերյալ և այլն)։

Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման արդյունքները հիմք են հանդիսանում նաև ՀՀ միջազգային պարտավորությունների կատարման տեսանկյունից և արտացոլվում են միջազգային վարկանիշային զեկույցներում: Բացի այդ, Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման արդյունքները քննարկվում են ՀՀ վարչապետի նախագահությամբ անցկացվող Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստերի ընթացքում:

Նման պայմաններում կարևոր է, որ Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի կողմից հավաքագրվող և ներկայացվող տեղեկատվությունը լինի ամբողջական, ճշգրիտ և պարունակի գործողությունների կատարման արդիական նկարագիրը:

Կարևոր է, որ Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուն ստուգի տեղեկատվության ամբողջականությունը, իսկությունը և արդիականությունը՝ հարկ եղած դեպքում այն քննարկելով պատասխանատու ստորաբաժանումների և պաշտոնատար անձանց հետ:

Տեղեկատվությունը ներկայացնելիս Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուն պետք է համոզվի, որ այն համապատասխանում է Ռազմավարության գործողությունների ծրագրում տվյալ գործողության համար սահմանված կատարողականի թիրախներին, ակնկալվող որակական և քանակական արդյունքային ցուցանիշներին, ինչպես նաև գործողությունների ակնկալվող վերջնարդյունքներին:

Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուն պետք է ապահովի կատարող մարմնի պատասխանատու ստորաբաժանումների միջև համագործակցությունը, ապահովի նրանց միջև պատշաճ փոխգործելիությունը և ժամանակին բացահայտի գործողությունների իրականացման խոչընդոտները՝ դրանց մասին տեղեկացնելով պատասխանատու պաշտոնատար անձանց:

4. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ

Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) ստեղծվել է ՀՀ Վարչապետի 2019թ. հունիսի 24-ի N 808-Ն որոշման[3] հիման վրա (այսուհետ՝ Որոշում), որով սահմանվում են հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմը, նպատակները և գործառույթները, հասարակական կազմակերպությունների ներգրավման կարգը:

Խորհուրդը ղեկավարվում է ՀՀ վարչապետի կողմից և դրա կազմում ներգրավված են հակակոռուպցիոն քաղաքականության մշակմանը և իրագործմանը մասնակցող մարմինների ղեկավարները:

Խորհրդի նիստերը ըստ առկա կարգավորումների անցկացվում են եռամսյա պարբերականությամբ:

Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի, կոռուպցիայի հաղթահարման ուղղությամբ նախանշվող առաջնահերթությունների և առաջարկվող լուծումների քննարկումն է, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելմանը նպաստող քաղաքականությունների, ծրագրերի և իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ դիրքորոշում հայտնելը:

[3] Տե՛ս https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=191609

Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուները կարևոր դերակատարություն ունեն Խորհրդում քննարկվող հարցերի վերաբերյալ պատշաճ և ամբողջական տեղեկատվության ներկայացման համար:

Խորհրդի նիստերին ընդառաջ Հակակոռուպցիոն ծրագերի պատասխանատուները պարտավոր են պատշաճ կերպով հավաքագրել Խորհրդի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն, որը պետք է ներկայացվի արդարադատության նախարարություն պահանջվող ժամկետներում:

Ոչ լիարժեք կամ թերի ներկայացված տեղեկատվությունը կարևոր է առաջացած խնդիրների վերաբերյալ բարձր մակարդակով որոշումների կայացման և մարմինների կողմից թիրախային հանձնարարականների համար:

Նման պայմաններում Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուները մինչև տեղեկատվությունը ներկայացնելը պետք է ստուգեն դրա ճշգրտությունը, հավաստիանան, որ այդ տեղեկատվությունը ամբողջական է և վերաբերելի:

Նշված նպատակով, ցանկալի է, որ Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուները տեղեկատվությունը ներկայացնող մարմնի կամ պաշտոնատար անձի հետ վերստուգի ներկայացված տեղեկատվության ամբողջականությունը և ճշգրտությունը՝ հատկապես կարևորելով վիճակագրական տվյալների հավաստիությունը:

Եթե, Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների կողմից տեղեկատվության ստացումը հանդիպում է խոչընդոտների և տեղեկատվությունը չի ստացվում սահմանված ժամկետներում, ապա վերջինս այդ մասին հայտնում է տվյալ ստորաբաժանման ղեկավարին կամ տվյալ մարմնի գլխավոր քարտուղարին՝ ներկայացնելով պահանջվող տեղեկատվության շրջանակը և դրա ներկայացման ժամկետները:

ԳԼՈՒԽ 2. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

I. ՀՀ միջազգային հակակոռուպցիոն պարտավորություններ

1.1 Միավորված ազգերի կազմակերպության «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա (UNCAC)[4]

Հայաստանի Հանրապետությունը 2005 թվականին ստորագրել է Միավորված ազգերի կազմակերպության «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիան ((UNCAC) այսուհետ՝ Կոնվենցիա), իսկ Կոնվենցիայի դրույթները Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ են մտել 2007 թվականի ապրիլի 7-ին: Լինելով Կոնվենցիայի անդամ՝ Հայաստանի Հանրապետությունը տարիներ շարունակ ենթարկվել է Կոնվենցիայի իրականացման մոնիթորինգին, միևնույն ժամանակ իր ներդրումն ունեցել Կոնվենցիան վավերացրած այլ պետությունների մոնիթորինգային գործընթացին: Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է Կոնվենցիայի և ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի շրջանակներում գործող մի շարք աշխատանքային խմբերի անդամ: Նշված աշխատանքային խմբերի հանդիպումներին ընդառաջ ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի քարտուղարության կողմից պարբերաբար Հայաստանի Հանրապետությանն են ներկայացվում թեմատիկ հարցաշարեր:

[4] https://www.unodc.org/corruption/en/uncac/learn-about-uncac.html

1.2. Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խումբ (ԳՐԵԿՈ)

Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը (ԳՐԵԿՈ) ստեղծվել է 1999 թվականին Եվրոպայի խորհրդի կողմից՝ կազմակերպության հակակոռուպցիոն չափանիշներին անդամ պետությունների համապատասխանությունը վերահսկելու նպատակով:

ԳՐԵԿՈ-ի նպատակն է բարելավել կոռուպցիայի դեմ պայքարելու անդամ-պետությունների կարողությունները՝ վերահսկելով նրանց համապատասխանությունը Եվրոպայի խորհրդի հակակոռուպցիոն չափանիշներին փոխադարձ գնահատման և գործընկերների հակազդման դինամիկ գործընթացի միջոցով: Այն օգնում է բացահայտել ազգային հակակոռուպցիոն քաղաքականության թերությունները՝ խթանելով անհրաժեշտ օրենսդրական, ինստիտուցիոնալ և գործնական բարեփոխումները: ԳՐԵԿՈ-ն նաև հարթակ է հանդիսանում կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման լավագույն փորձի փոխանակման համար:

Ցանկացած պետություն, որը դառնում է Կոռուպցիայի մասին քրեական կամ քաղաքացիական իրավունքի կոնվենցիաների մասնակից, ինքնաբերաբար միանում է ԳՐԵԿՈ-ին և նրա գնահատման ընթացակարգերին:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 2005թ. մայիսի 1-ից և Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 2006 թվականի մայիսի 1-ից[5]:

1.3. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպությունը[6] (այսուհետ՝ ՏՀԶԿ) ֆորում է, որտեղ կառավարությունները համեմատում և փոխանակում են քաղաքականության փորձը, բացահայտում լավ փորձը՝ ի հայտ եկած մարտահրավերների

[5] ԳՐԵԿՈ-ի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար տե՛ս հետևյալ հղումը Welcome to the GRECO website - Group of States against Corruption (coe.int)
GRECO-ի զեկույցներին ծանոթանալու համար տե՛ս հետևյալ հղումը Evaluations - Group of States against Corruption (coe.int)

[6] www.oecd.org

լույսի ներքո և ներկայացնում են որոշումներ և առաջարկություններ: ՏՀԶԿ-ի առաքելությունն է խթանել այն քաղաքականությունները, որոնք բարելավում են մարդկանց տնտեսական և սոցիալական բարեկեցությունը ամբողջ աշխարհում[7]:

ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի մասին

ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցը[8] ստեղծվել է 1998 թվականին, որի հիմնական նպատակն է աջակցել իր անդամ երկրներին կոռուպցիայի կանխարգելման և պայքարի ջանքերում: Այն ապահովում է տարածաշրջանային հարթակ՝ հակակոռուպցիոն գործունեության խթանման, տեղեկատվության փոխանակման, լավագույն փորձի մշակման և դոնորների համակարգման համար տարածաշրջանային հանդիպումների և սեմինարների, գործընկերների ուսուցման ծրագրերի և թեմատիկ նախագծերի միջոցով: ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցն իր գործունեությունն իրականացնում է ընդհանուր ժողովների, համաժողովների, ենթատարածաշրջանային նախաձեռնությունների և թեմատիկ նախագծերի, տարածաշրջանային հանդիպումների և սեմինարների միջոցով:

Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մասին

Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիրը (IAP) ենթատարածաշրջանային գնահատման ծրագիր է, որը մեկնարկել է 2003 թվականին ՏՀԶԿ/Հակակոռուպցիան ցանց-ի հովանու ներքո՝ աջակցելու հակակոռուպցիոն բարեփոխումներին երկրների գնահատումների և մասնակից երկրների կողմից հանձնարարականների կատարման շարունակական մոնիթորինգի միջոցով՝ աջակցելու համար ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի (UNCAC) և այլ միջազգային չափանիշների և լավագույն փորձի իրականացմանը[9]: Հայաստանի Հանրապետությունը 2003 թվականին միացել է Հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների

[7] ՏՀԶԿ-ի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար տե՛ս հետևյալ հղումը Home | OECD Anti-corruption & Integrity
[8] www.oecd.org/corruption/acn
[9] https://www.oecd.org/corruption/Anti-corruption-reforms-in-Armenia.htm

ծրագրին: Ծրագրի հիմնական գործընկերներն են մասնակից երկրների[10] ազգային կառավարությունները և հակակոռուպցիոն մարմինները:

II. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների գործառույթները

ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուները ապահովում են հետևյալը.

1) Միջազգային հարցաշարերի պատասխանները չպետք է պարունակեն միայն հղումներ օրենքներին: Հարցաշարերի պատասխաններում պետք է մանրամասն մեկնաբանել և վերլուծել ներպետական կարգավորումները:

2) Պետք է հնարավորինս ապահովել հայցվող վիճակագրական տվյալների ճշգրտությունը, ամբողջականությունը և արդիականությունը: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսդրական կարգավորումների կիրարկման գնահատումը կատարվում է վիճակագրական ճշգրիտ տվյալների հիման վրա:

3) Միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված հարցաշարերի շրջանակներում տեղեկատվություն տրամադրելիս անհրաժեշտ է առաջնորդվել վերջիններիս կողմից ներկայացված համապատասխան մեթոդաբանություններով: Մեթոդաբանությունների առկայության պարագայում դրանք կից ուղարկվում են արդարադատության նախարարության կողմից: Բացի այդ, վերջիններս հասանելի են նաև միջազգային կազմակերպությունների պաշտոնական կայքէջերում:

4) Միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող գնահատումների շրջանակներում կազմակերպվող ներպետական այցերին, հեռավար հանդիպումներին և կազմակերպվող այլ քննարկումներին անհրաժեշտ է ապահովել պատշաճ մասնակցություն՝ ներգրավելով համապատասխան ոլորտի պատասխանատու պաշտոնատար անձանց և հարցաշարերի լրացմանը մասնակցություն ունեցած աշխատակիցներին:

5) Անհրաժեշտ է պահպանել հարցաշարերի լրացման և ներկայացման համար սահմանված ժամկետները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք նախատեսվում են հենց միջազգային կազմակերպությունների կողմից:

[10] https://www.oecd.org/corruption/acn/OECD-Anti-Corruption-Network-Work-Programme-2020-2024-ENG.pdf 5-17 էջեր:

6) ՏՀԶԿ, ՄԱԿ, ԳՐԵԿՈ և միջազգային այլ զեկույցները պետք է պարբերաբար ուսումնասիրել համապատասխան մարմինների կողմից՝ դրանք հաշվի առնելով համապատասխան իրավական փոփոխություններ իրականացնելիս: